Հասցեատեր՝

«Գանձասար ՖԱ» ՀԿ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ gandzasarfc21@gmail.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04.04.2024թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Նարեկ Ադամյան
	Արփի Լազարյան
	Հենրիկ Խաչատրյան
	Դավիթ Բակլաչյան

Վարույթ՝	ԱԽ-128
Խախտում՝	1. Գնդակ վերադարձնող երեխաների նվազագույն քանակը չապահովելը.(Հավելված 1 Ա, 76-րդ կետ) 2. Խաղի ժամանակահատվածում մրցավարներին փոխարինման սարքին էլեկտրոնային ցուցատախտակ չտրամադրելը(Հավելված 1 Ա, 69-րդ կետ 3. Թերի անվտանգության ապահովելը (Հավելված 1 Ա, 34-րդ կետ)
Առաջնություն՝	2023-2024 Հայաստանի Առաջին Խմբի Առաջնություն
Խաղ՝	«Գանձասար» - «Լեռնային Արցախ», 29.03.2024թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023 թվականի խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Գանձասար ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նախազգուշացում»:
   Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023 թվականի խմբագրություն) 26-րդ հոդվածը՝ հրահանգել «Գանձասար ՖԱ» ՀԿ-ին ակումբի կողմից ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ապահովել խաղերի ժամանակահատվածում գնդակ վերադարձնող երեխաների նվազագույն քանակը:
2. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023 թվականի խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Գանձասար ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով:

3. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023 թվականի խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Գանձասար ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նախազգուշացում»:
   Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023 թվականի խմբագրություն) 26-րդ հոդվածը՝ հրահանգել «Գանձասար ՖԱ» ՀԿ-ին ակումբի կողմից ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ապահովել անվտանգության միայն չափահաս աշխատակիցների ներկայությունը խաղերին:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

<u>Ծանուցում</u>

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (legal@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 100,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: